նուլ գյիշատակարան սորա։ Նա և ինքն կտրուել էր ի չար մարդէ։ Հարցի զ՝հայրապետ արեղէն թէ ինչ է կտրած յիշատակարանս։ ասաց թէ՝ «Թշնամի մարդ է արարել։ թէ չէ նէ իմ վկայ կայ։ որ իմ պապին գնած է. ու մեր ազգին է։ Հարցի թէ վկայն ո՞վ է. նա ասաց թէ — Վարդիկն է. Եենքին որդին գնաց երեր։ Ես էր Հարցի։ զվկայութիւն նորա լսեցի։ նա ասաց թէ ես իմ հոգուս վկայ եմ հէնց։ վկայ եմ որ իմ պապէն լսել եմ թէ՝ Կարմիր Աւետարան հայրական իրիցոյ գնուածք է։ էն նշանով մեծին հարցեալ էր թէ ինչ էր շալակիդ. նա . . . ՝ ծախեմ վասն պակասութեանս պատճառի։ նա ծախեց . . . գնեց էն. նշանաւոր գնումն մեծ կարմիր եղն երեսի և այլ բազում . . . Վարդիկին վկայութիւն այս է։ երդմամբ վկայեց։

«Ես հարցմանս . . . ազելոյ որդիքն Շահ-պէնտի ու Փերիկն վկայ է. Դաւիթ արեղէն . . . Զալիկն վկայ է։ Անուամբ Աստուծոյ ամենակալին։ ես հայրական երեց գնեցի Սուրբ Աւետարանս Աւագայ որդւոյ Վախթանկէ ի հալալ արդեանց իմոց։ յիշատակ ինձ և ծնողաց և որդւոցն իմոյ Մարքար քահանայի։ և այլ ամենայն արեան ազգականացն իմ ով որ կարդայք կամ աւրինակէք յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր և Աստուած զձեզ յիշէ իւր միւս անգամ դալստեան ամէն»։

Վաղարշակերտ գիւղաքի վերան մասնաւոր ինչ ծանօթութիւն տուի։ այժմ փոքր իմն ևս որոյ քաւշանի վերան աչք դարձնեմք։

1885 օգոստոս ամսոյ մէջ էինք. կիւրակէ առաւօտ մի չորս ձիաւորներով բարձրացանք Շահկոլ լեռան գագաթը։ տեսանք Շահկոլ անուանի լճացեալ աղբիւրն։ որ յատակից առատ ջուրն դէպի վեր կը վխտար։ տեսանք աղբիւրի աջ կողմի տափարակին վերայ 15-ի չափ սեաւ վրաններ։ ուր գետեղուած էին Մամանցի կոչուած

---

1 Կէտերը դրուած է եղծուած տեղերն։